**Սոցիալ և հուզական աջակցության համակարգի ենթակոմիտեի ժողով**
**6-10-20**

Ահա տեղեկություն և աշխատանքի արդյունքները, որոնք կատարվել են անցած շաբաթ.

**1. Խորհրդատվություն դպրոցում.**

- Հիբրիդ մոդելի ընթացքում, մենք կարող ենք աշխատել ընտանեկան ծառայությունների գործակալության (FSA) հետ, որպեսզի տեսնենք, թե արդյոք հնարավոր է անձամբ կատարել թերապիայի սեսիաները՝ աշակերտի և նրա ընտանիքի համաձայնությամբ, ապահովելով հասարակական հեռավորության և համայնքային առողջապահական գրասենյակի առաջարկությունները:
- Եթե ուսուցումը կատարվի լրիվ համացանցային մեթոդով, մենք կաշխատենք նույն գործակալության հետ, որպեսզի տեսնենք, թե արդյոք կկարողանա անձամբ կատարել թերապիայի սեսիաները, եթե աշակերտն ու ընտանիքը ցանկանա՝ իմանալով, որ այն չի խախտի հասարակական հեռավորության և համայնքային առողջապահական գրասենյակի առաջարկությունները:
- Ինչ որ վերաբերվում է ուղղորդման գործընթացին, ապա կոմիտեին դուր եկավ այն միտքը, որ ուղղորդման հրավերքը կտեղադրվի շրջանի և դպրոցի կայքէջում: Տարրական դպրոցների տնօրենները ասացին կոմիտեին, որ միջնակարգ դպրոցի հետ համեմատությամբ, աշակերտներին ուղղորդելը տարբեր կերպ է կատարվում: Մենք որոշել են առանձին հանդիպել Լոռիի հետ և քննարկել տարրական դպրոցի ուղղորդման գործընթացը և անհրաժեշտության դեպքում նաև բարելավել այն:
- Խմբի ամենամեծ մտահոգությունն այն է, թե ինչպես պետք է վարվել աշակերտների մեծ թվի հետ, որոնց հարկավոր է դպրոցում տեղի ունեցող խորհրդատվություն: Պահանջը կարող է գերազանցել մեր հնարավորությունները՝ համապատասխան կերպ և ժամանակին պատասխանելու: Սա մեծ մտահոգություն է ինչպես աշխատակազմի, այնպես էլ ծնողների համար: Մենք ցանկանում ենք սկսել զրույց Ընտանեկան ծառայությունների գործակալության հետ, ինչպես նաև աշխատել այլ գործակալությունների հետ, եթե նրանք չեն կարող բավարարել բոլորի պահանջները:

**2. Աշակերտական կենտրոններ.**

- Եթե ուսուցումը կատարվի լրիվ համացանցային մեթոդով, կլինի արդյո՞ք հնարավորություն, անձամբ կատարել որոշ ծառայություններ, պահպանելով հասարակական հեռավորության և համայնքային առողջապահական գրասենյակի առաջարկությունները:

**3. Աշակերտական խորհրդատվության խմբեր.**

- Տարրական դպրոցները հարցնում են, որ անհրաժեշտության դեպքում, հնարավոր կլինի՞ խմբակային խորհրդակցության տարբերակ ավելացնել փոքր տարիքի երեխաների համար:

**4. The following are potential websites that can be used on a district and site website:**

- Անդամները վերանայում են Լոս Անջելեսի գավառի կրթական գրասենյակի առաջարկած ռեսուրսներ: Եթե հաստատվեն, մենք այն կտեղադրենք ռեսուրսների էջում, որն արդեն առկա է մեր շրջանի կայքէջում:
- Հատուկ ուսուցման գրասենյակը նունպես կվերանայի ռեսուրսները, որոնք հնարավոր կլինի ավելացնել շրջանի ռեսուրսների էջում:

- Դպրոցները հղում կավելացնեն իրենց կայքէջերում, որը կուղղորդի նրանց շրջանի կայքէջի ռեսուրսների էջին:

**5. Հաղորդագրություն.**

- Սա շարունակական թեմա է: Մենք աշխատում ենք աշակերտների ներկայացուցիչների հետ, որպեսզի տեսնենք, թե արդյոք հնարավոր է հաղորդակցվել նրանց հետ Տիկ տոկ կամ Ինստագրամ ծրագրերի և լրատվական այլ միջոցներով, բացի մեր արդեն ունեցած մեթոդներից:

**6. Սոցիալ հուզական ուսումնական ծրագիր.**

- Մենք դեռ նյութեր ենք որոնում: Ջենիֆերը ստուգելու է «Երկրորդ քայլ» ծրագիրը, Թամին՝ հատուկ ուսուցման նյութեր, Ջոնը կխոսի Թոմ Քրաուտերի հետ՝ միջնակարգ դպրոցի իր փնտրած նյութերի հետ ծանոթանալու համար:
- Կոմիտեն կարծում է, որ ուսումնական ծրագիրը կենսական դեր կխաղա դպրոցները բացելուց հետո:

**7. Կոմիտեի անդամները.**

- Կոմիտեին կմիանան նոր անդամներ.
  Ջոդի Լևի, դպրոցի խորհրդատու
  Քրիստինա Հարբրիջ, դպրոցի հոգեբան
  Լոռի Բլեյկ, վարիչ, Ընտանեկան ծառայությունների գործակալության միջամտության մասնագետ

**Հաջորդ ժողովը տեղի կունենա 2020 թվականի հունիսի 18-ին, երեկոյան ժամը 6:00-ին:**